Արձանագրություն N 4
ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/005 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «31» Մարտի 2022թ.
ժ. 11:00

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ալինա Ավետիսյանը,
Անդամներ՝ Գալուստ Գալստյանը և Զավեն Աղաջանյանը.
Քարտուղար՝ Արթուր Բաղալյանը:

I. ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/005 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի մասին

1. Քննարկման արդյունքում, «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկված փաստաթղթերում, գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է հետևյալ անհամապատասխանությունը.

- «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հետո) նշված ապրանքային մակնիշով ապրանքի տեխնիկական բնութագրի տեխնիկական ցուցանիշների համեմատումը հրավերով սահմանված տեխնիկական բնութագրում նշված ցուցանիշների հետ գնահատող հանձնաժողովի կողմից հնարավոր չի իրականացնել, քանի որ առաջարկված «Touch Pie LP22-I3» կամ «Touch Pie LP22-i3» մակնիշի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն տեղեկատվական առկա բազաներում և շուկայում առկա չէ (անգամ Guangzhou Touch-pie Electronic Technology Co., Ltd. Ընկերության կողմից կիրառվող www.touchpie.cn պաշտոնական կայքում): Այսինքն՝ գնահատող հանձնաժողովի 24.03.2022թ-ի թիվ 2 արձանագրության 3-րդ մասի 4-րդ կետով արձանագրված անհամապատասխանությունը, այն է՝ հստակ չի ներկայացված առաջարկվող ապրանքի մակնիշը, մասնավորապես՝ անհրաժեշտ է հստակ նշել առաջարկվող ապրանքի մակնիշը, իր նույնականացման դասիչով, որպեսզի հնարավոր լինի առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրով նախատեսված տեխնիկական ցուցանիշները համեմատել հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրի հետ, մասնակցի կողմից ամբողջությամբ չի շտկվել:

Ընդունվել է որոշում.
Կողմ՝ 3, դեմ՝ 0

II. Գնահատող հանձնաժողովի որոշման մասին

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

ա) Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին որոշման 42-րդ կետի պահանջները գնահատել անբավարար և մերժել «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի ներկայացված հայտը,

բ) Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին որոշման 45-րդ կետի պահանջները, «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի տվյալները՝

համապատասխան հիմքերով ուղարկել լիազորված մարմին՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով,

գ) Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը չկայացած հայտարարել ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/005 ծածկագրով ընթացակարգը:

Ընդունվել է որոշում.

Կողմ՝ 3, դեմ՝ 0

Գնահատող հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա. Ավետիսյան

գնահատող անդամներ՝ _____ Գ. Գալստյան

_____ Հ. Աղաջանյան

քարտուղար՝ _____ Ա. Բաղալյան